ԵՐԳ ՍԻՐՈՅ

Խօշ եա՛ր, քեզ լալով սէլամ, ես ի քո քաղքէն կու գլտնամ.
Բեր պագնեմ ղաշերդ, ունիրդ, երբ երթամ՝ չի կարօտանամ։
Ցայս աստուածաշէն ծոցէդ՝ երեսէդ մանրուած կու մընամ.
Բացվեր ես ի վարդ նըման, ես պըլպուլ՝ ի դէմ քեզ կուլամ։
Մարդ չիդնամ թ'էլ եար սիրեմ, կամ ըղքո սէրըն մոռանամ,
Կամ զքո անուշիկ պագիկն թէ սրտ՚ս հանեմ ուրանամ։
Թէ նուշ թէ շաքար ուտեմ, առանց քեզ իմ հալն է հարամ.
Ապրեր եմ քըսան տարի ու չարեր (2) հազար տարոյ զամ։
Ի՞նչ չած է իմ շատ ապրիլն որ առանց սիրուդ կը մընամ։
Ես ու դո՛ւն, հոգեկ, ես ու դուն, ես ու դուն, աշխա՛րհ՝ դօշկեկ ի քուն (2)։
Ես ու դու՛ն, աչկո՛ւնք, ես ու դուն՝ ես ու դուն՝ օթվան սարերուն,
Զէդ տաա՛, հոգեկ, զէդ տաա՛, զաչքդ ուտեմ՝ ունքերդ ի վերայ։

ՏԱՂԱՇԱՐՔ (4)

(Վերագրելի Նահապետ Քուչակի)

Գիշերս ես ի դուրս ելայ, թուխ ամպ էր 'ւ անուշ կու ցօղայ(5).

(1) Այս տաղը, օրինակուած Ս. Ղազարու Թիւ 565 ձեռագրէն, կրնայ Քուչակի պանդուխտի երգերուն շարքին մէջ մտնել։

(2) Ձեռ. Ու չարեր եմ։

(3) Այս վերջին երեք տողերը չեն համաձայնիր Քուչակեան տաղաչափութեան որուն համեմատ գրուած է տաղին ամբողջութիւնը։

(4) Հրատարակուած Կ. Կոստանեանցի «Միջնադարեան տաղերու» երկրորդ պրակին մէջ (էջ 55, 57) իբր միակ տաղ՝ «Երգ եարոջ» տիտղոսով։

(5) Կոստանեանց՝ «Թուխ ամպեր և անուշ կու ցօղայ։

Զիմ եարն ալ կանկնուկ տեսայ, զիւր կանաչ կապան կու թանայ։
Ձեռքըս ըռնեց տուն տարաւ, գդուռն եդիր՝ ըղփակն ի վերայ.
Մանուկ ես նորա կ'ասեմ, որ առնու զբոյնին ու բանայ.
Բանայ 'ւ ի պաղչան մտնի, վարդ քաղէ ու ցօղն ի վերայ։
Եւ փունջ մի եարոջըն տայ որ ըընէ զերեսն ի վերայ։

〰〰

Ճերմակ ծոց ու լայն ճուպա, ի ծոցիդ ի վայր սահեցայ.
Այդ խակ թեւերուդ միջին գիրկ ածի պահիկ մ'արգելցայ.
Ձեռկունքս այլ ի վեր կալայ, «Տէ՛ր, արա՛ զմահիկս ի հոսայ(1)։
Զմահիկս ու զմատղիկս արա՛ աղկեկան կրծոցն ի վերայ (2)։

〰〰

Այս աստընուորի չահէն, անչահէն ես ի՞նչ չահեցայ.
Առի զբազաս որս ելայ, թըռուցի, զինչ մաղպուռն եղայ.
Բաղա՛, տընաւեր բազա՛, գընացած տեղդ (3) ինձ տաա՛,
Ես այլ հետ քեզի կուգամ, համց հաչուեց թէ որ մի չեղայ։

〰〰

Դիժար հիւընտուկ եմ ես, ա՛ռ խընծոր արի՛ ե՛կ զիս տե՛ս.
Հազար գիներար կուտամ որ օտար հաքիմ չը բերես,
Օտար հաքիմ ի՞նչ անեմ, իմ ամէն տարտըս դու գիտես.

(3) Հօսայ. ըըտեղը։

(4) Այս քառեակը կը կրկնէ՝ ու զմայլելի ձեւով՝ գաղափար մը զոր արդէն Քուչակ արտայայտած է այն քառեակին մէջ որ կ'աւարտի «Հոգիս պարապկան էի Գրողին, լօք Թող գայ ու առնու տանի» տաղով։

(1) Կոստ. «Տեղն»։

digitised by A.R.A.R.@

Եկո՛ տամ ծոցուս թալնին, բա՛ց սրտիս դուռը
մուտ ի ներս(1)։

Եալամ եալալամ կ՚ասեմ, չեմ եկեր, քո սէրն
է բերեր.
Քո սէրն իմ սրտին միջին տուն չինէր 'ւ ի ներս
կու կենայ։ (2)

Բազան, երբ քաղցած լինի, զորսն առնու,
այնով զըմպաղի.
Մանուկ՝ սիրու ակր լինի, պաք (3) առնու կու-
րօտն անցանի.
Ա՜մ ի՞նչ լինենամ, թէ պագնեմ նա ինձ կու
պխտի (4).
Հի՛մի ի ծոցուդ ելայ, դեռ աչուերս ի հետ (5)
կու հայի։

Հանց եղեմ ի քո սիրուդ զինչ ամռան աւազն
որ կ՚այրի.
Ջօրն ի բուն երկինքն ի վեր կու հայի կաթիկ
մ՚անձրեւի(6)։

Հանչափ ջանացի իւր հետն որ իրմէն պագիկ
մի առի.
Ի քաղցրութենէն եղբա՛րք, բըռներ է սրտիկս
որ այրի(7)։

Պագնե՛մ ըղքո լան ճակատդ՝ որ աչքեր ունիս
ղազալէ.
Գըրկիմ ըղքո ուռ միջկունքդ՝ որ հագեր(8) ես
չատ կապանի(9)։

(1) Այս քառեակը քիչ տարբերութեամբ վարիանթ մըն է Քուչակի «Հիւանդ եմ ի քո սիրուդ» քառեակին։

(2) Անաւարտ է այս տաղիկը։

(3) Կոստ. «պաք»։

(4) Երկու վանկ պակաս է այս տողին մէջ։

(5) Թերեւ «ի յետ»։ (6) Կիսատ տող։

(7) Վերջին կիսատողը պէտք է ուղղուի՝ «բռընկեր սրտիկս ու կ՚այրի» ինչպէս կայ տրղէն Ակնայ ժողովրդական երգերուն մէջ։

(8) Կոստ. «հագեր»։ (9) Կիսատ

Քանի՜ ու քանի՜ ասեմ «զիմ եարին կապան
կարեցէք,
Արեւն իւր երեսք արէք, զլուսընկան աստառ
ձեւեցէք.
Թուխ ամպն այլ բամպակ արէք, 'ւ ի ծովէն
դերձան քաղեցէք.
Աստղերն այլ կոճակ արէք, զիս ի ներս ողկիկ
չարեցէք» (1)։

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Խիստ եմ կարօտցեր(2) զիմ եարս, զուն ածես (3)
որ ես կարօտնամ (4).
Ով ըղքեզ մօտ յիս բերէ, նայ հանեմ զճիկերս
իրեն տամ.
Ջաղ տսա՛ (5), ճերմակ, զա՛ղ տսա, ճերմակ
ծոց ու ծինն (6) ի վրայ (7)։
Ապրեր եմ քառսուն տարի ու քաշեր հազար
տարու զամ.
Ի՞նչ չահ է իմ չատ ապրիլս երբ ի քէն կարօտ
կու մընամ.
Տարուբեր քամեկ, տարուբեր, զզէչն տար
ղաղեկն տո ու բեր։

(1) Այս տաղին վերջի մասի գաղափարը և զայն արտայայտող պատկերները մեծ մասամբ կը վերագտնուին Ակնայ ժողովրդական երգի մը մէջ՝ սկիզբն ու վերջը ուրիշ տարրերու խառնուած.

Ան բարձըր լեռներն ի վար մեզի բարկ արեւ-
մին է ցաթեր.
Ըմենուն երդիքն ի վար, մեզի դուռն ի ներս
է ճառագեր.
Ըմենդ ի վըրայ եկէք, թագւորին կապան կա-
րեցէք.
Լուսընկան աստառ արէք, արեգակն երես
ձեւեցէք.
Ան մոյ ու խոշոր աստղեր թեւերուն տիկմէ
կարեցէք.
Հայ իմ պզտիկ թագւոր, կլորեր ես մեզ ծմե-
րուն,
Ծովերդ ի երդիքն ելեր՝ կախուեր է խոշոր ձի-
ղերուն։

(2) Ձեռ. կարօտացեր. (3) ձեռ. ածես. (4) ձեռ. կարօտնամ. (5) ձեռ. զաղասայ. (6) ծին (grain de beauté), ձեռ. ծինն։ (7) Ձեռ. ի վերայ։

digitised by A.R.A.R.@